բաց շրջեցուցանել զէնս հրաց համահաւասար կերպիւ և համեմատութեամբ միմեանց, և ամենայն աւուր ծագել առաւօտու վեց ժամու մինչ 'ի ութն ժամ առաւօտ մրգել, կրթել զինուորս հրացի զինաց միակերպ կարգադրութեամբ, բաց 'ի աւուրն կիրակէի լեցի հանգիստ ամենեցոյն 'ի կրթմանէ, գրուեցաւ 'ի դրունս և այլն։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին։

Ս. Տ. ○
Վ. Տ. ○
Գ. Տ. ○

Միքայել Իշխան. ○
Մանուէլ Գծագիր. ○

Օրինակ նամակի լրտես Պետրոսեան։

ԳԼՈՒԽ ԿԵ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին բարձրայ հայոց 'ի գաւառէն արտաշատայ, և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց հաստատեցաք սիրտ մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ տանն հայոց, տուաք պաշտօն լրտես պետութեան քեզ, երկայնամիտ Պետրոսիդ 'ի մէջ քաղաքի Նախիջիվանու և շուրջ վիճակի նորայ 'ի յերեսս երկրի աշխարհին բարձրահայքայ հայոց ժամանակաւ երիս ամաւ, զի երկայնամիտ Պետրոսդ կացցես և մնասցես պետ